Ամսաթիվ
2012-02-02

Գործի No
ՍԴ/0799/02/10

Դատարան
Վերաքննիչ քաղաքացիական դատարան

Հայցվոր
Արմեն Խաչատրյան, Արամայիս Հակոբյան, Աշոտ Բալայան, Բորիկ Ղազարյան, Ռուզաննա Ղազարյան, Մերի Ավետիսյան, Վահագն Գրիգորյան, Տիգրան Գրիգորյան, Լուսինե Գրիգորյան, Հայրապետ Թևանյան, Արտուր Թևանյան, Վարսենիկ Հովհաննիսյան, Հայկանդուխտ Հովհաննիսյան, Աննա Հակոբյան, Ք

Պատասխանող
ՓԲԸ

Դատական ակտ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր Քաղաքացիական գործ թիվ ՍԴ/0799/02/10
իրավասության դատարանի վճիռ
Նախագահող դատավոր՝ Վ.Մանասարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան),

նախագահությամբ՝ Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ
մասնակցությամբ՝ դատավորներ Ն.ՏԱՎԱՐԱՑՅԱՆԻ
Դ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

2012 թվականի փետրվարի 02-ին
դռնբաց դատական նիստում, քննելով պատասխանող «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության վերաքննիչ բողոքը ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2011 թվականի մարտի 24-ի թիվ ՍԴ/0799/02/10 վճռի դեմ՝ կայացված քաղաքացիական գործով ըստ հայցի Քաջիկ Զավենի Մարգարյանի, Աննա Նապոլեոնի Հակոբյանի, Հայկանդուխտ Հովհաննեսի Հովհաննիսյանի, Վարսենիկ Հովհաննեսի Հովհաննիսյանի, Մարսելա Արտեմի Հակոբյանի, Արթուր Բորիկի Ղազարյանի, Լարիսա Արտեմի Հակոբյանի, Արշավիր Սերժիկի Խալափյանի, Ալիկ Ստեփանի Ղոնյանի, Լիզա Պյոտրի Հարությունյանի, Հայրապետ Արտուշի Թևանյանի, Արտուր Հայրապետի Թևանյանի, Բորիկ Բագրատի Ղազարյանի, Աշոտ Միշայի Բալայանի, Արամայիս Արտեմի Հակոբյանի, Արմեն Ռազմիկի Խաչատրյանի, Ռուզաննա Ռաֆայելի Ասրյանի, Մերի Բաբկենի Ավետիսյանի, Լուսինե Հրանտի Գրիգորյանի, Տիգրան Ալյոշայի Գրիգորյանի, Վահագն Տիգրանի Գրիգորյանի և

Գոհարիկ Արտեմի Միրզոյանի ընդդեմ «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության՝ պայմանագային պարտավորությունները պատշաճ կերպով կատարելուն և մարդկանց առողջությանն ու բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրին սպառնացող վտանգը վերացնելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը
Քաջիկ Մարգարյանը, Աննա Հակոբյանը, Հայկանդուխտ Հովհաննիսյանը, Վարսենիկ Հովհաննիսյանը, Մարսելա Հակոբյանը, Արթուր Ղազարյանը, Լարիսա Հակոբյանը, Արշավիր Խալափյանը, Ալիկ Ղոնյանը, Լիզա Հարությունյանը, Հայրապետ Թևանյանը, Արտուր Թևանյանը, Բորիկ Ղազարյանը, Աշոտ Բալայանը, Արամայիս Հակոբյանը, Արմեն Խաչատրյանը, Ռուզաննա Ասրյանը, Մերի Ավետիսյանը, Լուսինե Գրիգորյանը, Տիգրան Գրիգորյանը, Վահագն Գրիգորյանը և Գոհարիկ Միրզոյանը հայց են ներկայացրել դատարան ընդդեմ «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)՝ պահանջելով պարտավորեցնել Ընկերությանը կատարելու պայմանագրային պարտավորությունները և վերացնելու մարդկանց առողջությանն ու բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրին սպառնացող վտանգը:
ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ Դատարան) հայցը բավարարել է:
Դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել պատասխանող Ընկերությունը:
Վերաքննիչ դատարանը 2011 թվականի մայիսի 10-ին որոշում է կայացրել բողոքը վարույթ ընդունելու վերաբերյալ:
Վերաքննիչ բողոքի պատասխան է ներկայացրել Քաջիկ Մարգարյանի, Աննա Հակոբյանի, Հայկանդուխտ Հովհաննիսյանի, Մարսելա Հակոբյանի, Արթուր Ղազարյանի, Լարիսա Հակոբյանի, Արշավիր Խալափյանի, Լիզա Հարությունյանի, Հայրապետ Թևանյանի, Արտուր Թևանյանի, Բորիկ Ղազարյանի, Աշոտ Բալայանի, Արամայիս Հակոբյանի, Մերի Ավետիսյանի, Արմեն Խաչատրյանի, Ռուզաննա Ասրյանի, Լուսինե Գրիգորյանի, Տիգրան Գրիգորյանի, Վահագն Գրիգորյանի և Գոհարիկ Միրզոյանի ներկայացուցիչ Աշոտ Վարելջյանը:

2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը
Բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.
1) Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի դրույթները:
Այդ պնդումը բողոքաբերը հիմնավորել է հետևյալ պատճառաբանությամբ:
Դատարանը չի կատարել սույն քաղաքացիական գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն:
Դատարանը հետազոտման առարկա չի դարձրել և գնահատման չի ենթարկել ՀՀ բնապահպանության նախարարության կողմից Ընկերությանը տրամադրված ջրօգտագործման թիվ 000238 և թիվ 000239 թույլտվությունները:
Ընկերության սպասարկման տարածքի ջրային համակարգերը պետության կողմից 2004 թվականին փոխանցվել են ֆրանսիական ՍԱՈՒՐ ՍԱ մասնագիտացված ընկերությանը, որոնց կազմում կոյուղաջրերի մաքրման կայաններ չեն փոխանցվել այդպիսիք չլինելու պատճառով:
Բաժանորդների հետ կնքված տիպային պայմանագրերում թյուրիմացաբար

պահպանվել է նաև կոյուղաջրերի մաքրման գործառույթը, որը Հայաստանի Հանրապետությունում, բացի «Երևան ջուր» փակ բաժնետիրական ընկերությունից, ջրամատակարարար այլ կազմակերպություն, այդ թվում նաև Ընկերությունը, չի կարող կատարել, քանի որ Ընկերությունը տեխնիկապես հագեցած չէ նման աշխատանքներ կատարելու հնարավորությամբ:
Դատարանը հաշվի չի առել, որ պայմանագրի 4.2 կետում կոյուղաջրերի մաքրման համար սակագին չի սահմանվել, այն չի նախատեսվել նաև Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 27-ի թիվ 71-Ն որոշմամբ, քանի որ նման ծառայություն չի մատուցվում մաքրման կայանների բացակայության պատճառով: Այդ մասին նշվել է նաև Ընկերությանը տրված ջրօգտագործման թիվ 000238 և թիվ 000239 թույլտվություններում:
Նշված թույլտվությունների 9-րդ կետը վկայում է, որ կեղտաջրերի մաքրում չի կատարվում, իսկ 10-րդ կետը սահմանել է կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի տվյալները:
Հայցվոր կողմը Դատարան չի ներկայացրել որևէ ապացույց հասցված վնասի վերաբերյալ, իսկ Դատարանը, պարտավորեցման մասին վճիռ կայացնելիս, չի փորձել այն ճշտել (նշանակել փորձաքննություն՝ կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի տվյալները պարզելու նպատակով):
Դատարանը հաշվի չի առել, որ Ընկերությունը թույլտվություն է ունեցել կեղտաջրերի թույլատրելի ծավալները թափել Ողջի գետը:
Տվյալ դեպքում Ողջի գետի կամ շրջակա միջավայրի փորձաքննություն չի իրականացվել, այսինքն՝ գործում բացակայում է որևէ ապացույց Ընկերության կողմից թույլտվությամբ սահմանված թույլատրելի չափաքանակները կետանցելու վերաբերյալ:
2) Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի դրույթները:
Այդ պնդումը բողոքաբերը հիմնավորել է հետևյալ պատճառաբանությամբ:
Դատարանը վճռով պարտավորեցրել է Ընկերությանը կատարելու բաժանորդների հետ կնքված պայմանագրերով ստանձնած պրատավորությունները, կատարել որոշակի գործողություն, այն է՝ ապահովել կենցաղային կեղտաջրերի հեռացումը և մաքրումը, որն Ընկերության գործառույթների մեջ չի մտնում՝ առանց կատարման վայրը, ժամկետները, կոնկրետ անձին և միջոցները նշելու:
3) Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի դրույթները:
Այդ պնդումը բողոքաբերը հիմնավորել է հետևյալ պատճառաբանությամբ:
Ընկերությանը պարտադրվել է ապահովել բաժանորդների պայմանագրերով ստանձնած պարտավորությունները:
Ընկերությունն ունի շուրջ թվով 275.000 բաժանորդ, որոնց նկատմամբ պետք է կատարի որոշակի գործողություն:
Դատարանի կայացրած վճռի կատարումը, բացի հայցվորներից, շոշափելու է նաև Ընկերության մյուս բաժանորդների իրավունքները, այն դեպքում, որ Ընկերության մյուս բաժանորդները, բացի հայցվորներից, տեղկացված չեն եղել գործով դատական նիստի ժամանակի և վայրի մասին:
Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբերը պահանջել է բեկանել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2011 թվականի մարտի 24-ի թիվ ՍԴ/0799/02/10 քաղաքացիական գործով կայացրած վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

2.1 Վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումը և

հիմնավորումները
Վերաքննիչ բողոքի պատասխան է ներկայացրել Քաջիկ Մարգարյանի, Աննա Հակոբյանի, Հայկանդուխտ Հովհաննիսյանի, Մարսելա Հակոբյանի, Արթուր Ղազարյանի, Լարիսա Հակոբյանի, Արշավիր Խալափյանի, Լիզա Հարությունյանի, Հայրապետ Թևանյանի, Արտուր Թևանյանի, Բորիկ Ղազարյանի, Աշոտ Բալայանի, Արամայիս Հակոբյանի, Մերի Ավետիսյանի, Արմեն Խաչատրյանի, Ռուզաննա Ասրյանի, Լուսինե Գրիգորյանի, Տիգրան Գրիգորյանի, Վահագն Գրիգորյանի և Գոհարիկ Միրզոյանի ներկայացուցիչ Աշոտ Վարելջյանը:
Նշված պատասխանի համաձայն՝ ըստ «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնները, ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման տեխնիկական պայմանների սահմանման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 1999 թվականի մարտի 13-ի թիվ 149 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2004 թվականի հունվարի 22-ի թիվ 130-Ն որոշման հավելված 1-ի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների 2-րդ կետի, որտեղ սահմանվել են կանոններում օգտագործվող հասկացությունները, նշվել է ջրահեռացում՝ կոմունալ, կենցաղային և արտադրական կեղտաջրերի ընդունում, հեռացում և մաքրում:
Նույն կերպ նշվել է նաև հիշյալ որոշմամբ հաստատված հավելված 2՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման օրինակելի պայմանագրում:
««Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման մասին» ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 27-ի թիվ 71-Ն որոշմամբ սահմանվել են Ընկերության մատուցած ծառայությունների սակագները, որտեղ, որպես ծառայության տեսակ, նշվել է նաև սպառողներին ջրահեռացման ծառայության մատուցումը:
Ընկերության ոչ օրինաչափ գործողությունների հետևանքով շրջակա միջավայրին և Ողջի գետի աղտոտվածության մասին արձագանքել է նաև «Շրջակա միջավայրի վրա ներգործող մոնիտորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որը Ողջի գետի աղտոտվածության աստիճանի հետազոտության մասին նշել է իր զեկույցում:

3. Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը
Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.
1) Կողմերի միջև կնքվել են ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրեր (քաղաքացիների համար) և խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրեր (բնակիչ-բաժանորդների համար), որոնց համապատասխանաբար 2.2 կետի «բ» ենթակետի և 1.1., 2.2.1. կետերի համաձայն՝ պատասխանողի պայմանագրային պարտականությունների մեջ, բացի ջրամատակարարումից, ներառվել են նաև ջրահեռացման աշխատանքները:
2) Նշված պայմանագրերի վավերականությունն օրենքի ուժով (առոչինչ գործարք) և դատական կարգով (վիճահարույց գործարք) չի դադարել և դրանց գործողությունը շարունակվում է պայմանագրերում նշված ժամանակահատվածի համար:
3) Տվյալ դեպքում որպես գրավոր ապացույց Դատարանը գնահատել է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական

պետական տեսչության 2010 թվականի հունվարի 12-ի պատասխանը:

4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները
Քննելով վերաքննիչ բողոքը դրանում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Վերաքննիչ դատարանը եկավ հետևյալ եզրակացության.
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում»:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն»:
Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «Պայմանագրից ծագող պարտավորությունների նկատմամբ կիրառվում են պարտավորությունների մասին ընդհանուր դրույթները, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի և պայմանագրերի առանձին տեսակների մասին սույն օրենսգրքի կանոններով»:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածում ամրագված է, որ «Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան»:
Քննարկվող պարագայում քաղաքացիական պայմանագիրը, հանդիսանալով քաղաքացիական պարտավորության տարատեսակ, իր կնքման ուժով պայմանադիր կողմերի համար սահմանում է պարտադիր կատարման համար պայմանագարային պարտականություններ և իրավունքներ: Ընդ որում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 348-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Պարտավորությունը կատարելուց միակողմ հրաժարվել և դրա պայմանները միակողմ փոփոխել չի թույլատրվում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:
Սույն քաղաքացիական գործով հաստատվել է, որ կողմերի միջև կնքվել են ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրեր (քաղաքացիների համար) և խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրեր (բնակիչ-բաժանորդների համար), որոնց համապատասխանաբար 2.2 կետի «բ» ենթակետի և 1.1., 2.2.1. կետերի համաձայն՝ պատասխանողի պայմանագրային պարտականությունների մեջ, բացի ջրամատակարարումից, ներառվել են նաև ջրահեռացման աշխատանքները:
Նշված փաստը հաստատվում է 2003 թվականի փետրվարի 20-ին, 2003 թվականի փետրվարի 28-ին կնքված ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերով (քաղաքացիների համար) և 2007 թվականի սեպտեմբերի 27-ին, 2009 թվականի հունվարի 21-ին, 2009 թվականի մայիսի 16-ին, 2009 թվականի հուլիսի 01-ին կնքված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրերով (բնակիչ-բաժանորդների համար):
Նման պայմաններում վերոգրյալ իրավանորմերի ուժով՝ պատասխանող Ընկերությունը հայցվոր կողմի նկատմամբ ստանձնել է կենցաղային կեղտաջրերի հեռացման և մաքրման աշխատանքների պատշաճ կատարումը, այսինքն՝ այնպիսի կատարում, որը համապատասխանում է պայմանագրային պայմաններին, օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին:
Ինչ վերաբերում է բողոքում ներկայացված այն պատճառաբանությանը, որ

ջրահեռացման պայմանագրային պարտականությունը թյուրիմացաբար է ամրագրվել պայմանագրերում, քանի որ պատասխանող Ընկերությունը տեխնիկապես հագեցած չէ նման աշխատանքներ կատարելու հնարավորությամբ, ինչպես նաև նման աշխատանքների կատարման համար Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից նախատեսված չեն վարձավճարի սակագներ, քննարկվող պարագայում չեն կարող ունենալ որոշիչ նշանակություն:
Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը կարևորում է այն իրողությունը, որ այդ պայմանագրերի վավերականությունն օրենքի ուժով (առոչինչ գործարք) և դատական կարգով (վիճահարույց գործարք) չի դադարել և դրանց գործողությունը շարունակվում է պայմանագրերում նշված ժամանակահատվածի համար:
Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ քանի դեռ կողմերի միջև կնքված ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերը (քաղաքացիների համար) և խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրերը (բնակիչ-բաժանորդների համար) պահպանում են իրենց իրավական ուժը, պայմանագրային պարտականությունները ենթակա են կատարման:
Բողոքի մյուս փաստարկն այն մասին, որ համապատասխան մասնագիտական փորձաքննության բացակայության պատճառով Դատարանը չէր կարող իրավական գնահատման ենթարկել կեղտաջրերի արտահոսքի հետևանքով շրջակա միջավայրին վնաս հասցված լինելու փաստը, քննարկվող պարագայում անհիմն է, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված ապացույցների թվում, բացի փորձագիտական եզրակացությունից, առկա են նաև գրավոր ապացույցները:
Տվյալ դեպքում որպես գրավոր ապացույց Դատարանը գնահատել է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության 2010 թվականի հունվարի 12-ի պատասխանը:
Հիշատակվածի հաշվառմամբ՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքերը բացակայում են, Դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ գնահատել է բոլոր ապացույցները և կայացրել օրինական ու հիմնավոր դատական ակտ:
Վերը ներկայացված պատճառաբանությամբ՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված լիազորությունը («Գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ»):
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ և 221-րդ հոդվածների պահանջներով՝ Վերաքննիչ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վերաքննիչ բողոքը մերժել: ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2011 թվականի մարտի 24-ի թիվ ՍԴ/0799/02/10 քաղաքացիական գործով կայացրած վճիռը թողնել օրինական ուժի մեջ:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ ԴԱՏԱՎՈՐ՝ ԴԱՏԱՎՈՐ՝
Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Ն.ՏԱՎԱՐԱՑՅԱՆ Դ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտել « » ---------- 2012 թվականին:

Նախագահող դատավոր՝ Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ